

891.71
4-52

3-2181a 3-2181a

AM-1228
30 OCT 2006
25 NOV 2010


№ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆ 2.
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄՈՍԿՈՒՅԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ

Սոյն համարը տպուած է ՅՈՒՆԱՆ ՅՈՒՆԱՆԵԱՆԻ (Ռաստով Դ. Վ.) ծախքով:

ՎԱՍ. ԵՆՄԻՐՈՎԻՉ-ԳԱՆՁԵՆՆՈ

ՆՐԱՆՔ ՀԻՆԳՆ ԷԻՆ

ԹԱՐԳՄ.
ՕՐ. ՄԵՆԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ



ИИВ. № 21858

МОСКВА,
Типография Х. Бархударянцъ, Срѣтенка, Б.-Сухаревъ пер., д. 26.
1910

1 .07. 2013



Վ.Ս. ՆԵՄԻՐՈՎԻՉ-ՊԱՆՉԵՆԿՈ



39900-63

ՆՐԱՆՔ ՀԻՆԳՆ ԷԻՆ

I

Նրանք հինգն էին:

Մեծր քսան տարեկան էր, փոքրը՝ տասր:

Սպարապետ Բաղեցիու կրօսաները**) լաց էին լինում, երբ նրանց տանում էին բանտ:

Ծեր զինուորները չէին կարողանում անտարբեր աչքով նայել այդ աղճկանը:

Ենթսպան գիշեր ժամանակ ակամայից յեա էր մղում, երբ մտնում էր բերդը, որակը նստած էր լինում փոքրիկ Կլարան: Լապտերը մօտեցնելով անկողնին, նա տեսնում էր այդ երիտասրդին: Ոսկի գանգուրները ջրուած էին քնքոյշ գլխի շուրջը, փամ-

*) Հանգուցեալ օր. Մենիկ Թումանեանը թողել է մի շարք ինքնուրոյն և թարգմանական գրույցներ: Այդ գրույցները հետզհետէ լոյս կտեսնեն «Հանրային գրադարանի» շարքերում: Ծանօթ. հրատարակիչների:

**) Կրօսաներ՝—իտալիայում սնուանում էին այն սլաոններին, որոնք գտնուում էին Աւստրիական ծառայութեան մէջ:

վրիկ ավր դրած էր լինում թշի տակին, կորակ ար-
մունկը հանած վերմակի տակից, երեսի վրայ արտա-
սուրի հետքեր, իսկ արտաունըն՝ ասես, տարածում
են սառուներն:

Ազատ ձեռքով նա տիկնիկը սեղմել է կրծքին
և այնպէս քնել նրա հետ:

— Որակցի՞ց... սա... Միայն այգքանն է կար-
գանում ասել ձերունի գինուորր:

Մռայլոտ բանտարահը կարծեց թէ իրան են
հարցնում այդ տիկնիկի մասին:

— Ներեցէք... իմ կինն է սուել սրան... Մեր
աղջկանիցն է մնացել: Նա մեռաւ հէնց սրա հասա-
կում:

— Ես ոչ թէ դրա մասին:

Վերմակը թէթև ուղղելով, մանուկը նչայ քնի
մէջ, ինչ որ բան ասեց ու տիկնիկը աւելի ամուր
սեղմեց իւր կրծքին:

Ես ոչ թէ դրա մասին...

Նա դուրս եկաւ: Բանալին շարժուեց: Աղջիկը
մնաց մթութեան մէջ:

— Ես ոչ թէ դրա մասին... Դու ք չէր խառ-
նէր, չէր շփոթել... Նա էլ դատապարտուած է:

— Այն, ահա ցուցակը:

Բանտարահը թուղթը տուաւ նրան:

— Դատապարտուածների բերդը... Մօրեղիի
բնասանիքը... Կարա Մօրեղի... Պետութեան դաւա-
նանելու համար... Այն, լայց այդ անկարելի է... Չէ՞
որ նա երեխայ է...

— Դեռ սուրբ նաշակ չի սուել: Բոլորովին
փոքր է:

— Այստեղ մի որևէ սխալ կայ:

— Երէկ նրան տարել են դատարան: Զօրավարն
ինքն է քննել նրան:

— Զինուորը մտածմունքի մէջ քնկաւ:

— Եֆրէյսօր Նազէյլ, բնգունեցէք պահակը:
Հաւատացէք մնացածներին:

Նա սուաւ նրան լսողները և ցուցակը:

Նազէյլը սարգնած էր՝ ինչպէս պատը: Հապա-
րը և թուղթը դողում էին նրա ձեռներում:

— Պարոն ենթացայ, մենք իրար կը փոխարի-
նենք սուաւօտեան ժամը 5-ին:

— Այն:

— Փնօք Աստուծոյ, վե՛րք մենք չենք կա-
տարիլ:

— Արէք, ինչ որ ձեզ հրամայում են, յարեց
ձեր գինուորր: Այստեղ դատարններու աեղը չէ:
Դուք ատենում էք ցուցակի վերևում. «Կեսարի հրա-
մանով»:

Նա բարձրացրեց ձեռը և փաղաքշանքով դրեց
Նազէյլի ուսին:

— Մենք թուր ենք ձեռի միջին... Թուրը պա-
տասխանատու չէ ձեռի համար... Ձեռն էլ զլխի հա-
մար...

Նա դուրս եկաւ բակը:

II

Հուսինը դեռ չէր բարձրացել:

Մութ էր և աստղեր...

Մթութեան մէջ հաղիւ նշմարւում էին ասամ-
նաւոր պատերը:

Աշտարակի վրայ մի սև ուրուական էր երևում:

— Ո՞վ է դալիս. լսում է այնտեղից:

— Մերոնը:

— Լսի՛ր. — դանդաղօրէն և օխրամած հնչում
էր միւս աշտարակից:

— Լսի՛ր. — կրկնեց սև ուրուականն այս աշտա-
րակից:

— Լսի՛ր. — արձագանք տուաւ մէկը՝ պատի
ետեից:

Չայնակցեցին, և, ամենքն ասես մեռան:

Մութ էր և աստղեր:

Միայն բարածածկ բակում լսում էին ձեր
զինուորի զրական ու հաւասարաչափ քայլերը: Նա
հասաւ բակի զրան անկիւնի մօտ ընկած դռնակին:
Դուռը բաց արեց:

Թախաերը ծածկուած էին յարդով: Յարդի վրայ
կրօտաներ: Նրանք ճանաչեցին էնթսպային և խկոյն
վեր թռան: Մէկը խուլ նուազում էր երեքբարեան
սաղի վրայ: Նա քնարը ձգեց մի անկիւն:

— Նստի՛ր, նստի՛ր... կապիտանը քնած է:

— Չէ, նրա համար հէնց նոր տարան մի շիշ
զինի:

— Մենակ է:

— Այո, ինչ որ գրում է:

Ենթսպան ընկաւ մտածմունքի մէջ: Արդեօք,
այս նրա՞ գործն է: Ախր նա հէնց նոր ասաց. «Թու-
րը պատասխանատու չէ ձեռի համար, ձեռն էլ դիւի
համար»: Եւ նոյն բողբոջն նրա աչքի առաջ եկան
ոսկէ դանդաղները, երկայն արաւուները, ափի մէջ
դրած թուշը և վամպիրիկ կուռը... Եւ կրծքին սեղ-
մած՝ հնացած փիկնիկը:

Չէ, թուրը չէ. հանդարդ պատասխանեց ինքն
իրան: Նրա արմունկի մէջ ուղեղ չկայ, ոչ էլ սիրտ
է բարախում նրանում:

— Ի՞նչ էր հրամայում. առաջ յարեց մօտակայ
զինուորը: Նա կարծեց թէ նա իւր հետ է խօսում:

— Ո՞ւր է:

Եւ նա դրականապէս բաղխեց դուռը:

— Մաի՛ր:

Կապիտանը նստած էր սեղանի մօտ: Աղօտ լոյսն
ընկել էր ալեզարդ բեխերին և բանկոնի ոսկի բան-
ուածքներին:

— Այդ դձուք էք, Մելանտովիչ:

— Այո, կապիտան:

— Ի՞նչ է, ամեն բան կարգին է:

— Բանտումն՝ — այո, խոցիս մէջ՝ — ո՛չ:

Սպան, որին ասես ճիւղտով ցնցեցին, վեր թռաւ:
Նա չար էր և բարձրահասակ: Նա մօտեցաւ զին-
ուորին:

— Մերանտովիչ... Ծեր յիմար... Դու ցնոր-
ուե՛լ ես...

— Ո՛չ, կապիտան... Բայց այժմ կրկամենայի
ցնորուել... Ժամանակաւոր...

— Ի՞նչ է պատահել: Սպասիր, ուշքի եկ: Աչ-
քերու՛մդ արասուք է:

III

— Կապիտան, իմ ձեռին մեծացած եղբորս սպա-
նեցին էյլառու՛ի մօտ՝ և ես լայ չեղայ:

— Յիշու՛մ եմ. մենք այնուեղ միասին էինք:

— Երբ որ Արկօ՛ի մօտ՝ ձեզ վիրաւորուած հա-
նեցին զժոխքից և կարծեցի թէ դուք մեռած էիք,
իմ աչքերը ցամաք էին:

— Դրա համար ես քեզ հարցնում եմ, իմ ուղ-
մական ընկեր. կո՛ց, զինի խմիր:

Նա բաժակը վերցրեց: Ապակին զնգզնգում էր
նրա ասամների արանքում: Կէսը խմեց: Քիչ էր մը-
նում որ խեղտուի:

— Յեա՞՞յ...

— Ես նոր ստուգեցի:

— Փախե՛լ է որևէ մէկը:

— Մանուկները չեն փախում... Ի միջի այլոց
այնուեղ կայ և Կլարա Մօրեյլի:

— Կայ, նրա հայրը գաւանան է: Նա փախել
է զէպի լեռները, սպանել է մեր պահապաններին:

— Այո՛:

— Նրա գաւաններին գասել են երէկ...

— Եւ Կլարա Մօրեյլին... Նա տասը տարե-
կան է... Նա այժմ արասուաթօր՝ ննջում է իւր
տիկնիկի հետ:

— Յեա՞՞յ:

— Եւ վաղն առաւօտեան... Կլարա Մօրեյլին
զնգալահար կլինի:

— Անկարելի է:

— Նա աեղափոխուած է գատապարտուածնե-
րի բերդը: Դատաւնոի ցուցակը և պատճէնը բան-
ասպետի մօտն է:

— Անկարելի է, ես քեզ տտում եմ: Մենք օտար,
գաւանանոց երկրում ենք... Բայց մենք մանուկների
հետ չենք կուռում... Մենք զէն ենք ձղում խռովա-
րար զլուսները... կայսեր թշնամիներին... Էլ այսուեղ
ինչ տասը տարեկան աղջիկներ:

Նա անցուղարձ արաւ սենեակի մէջ: Պատու-
հանը բացաւ: Խօնաւութիւնն ու զովութիւնը լայն
ալիքներով ներս խուժեցին: Ճրագի լեզուն գողգո-
ղաց: Երկայն ստուերները բուսան սպիտակած պա-
տի վրայ և հօծուեցին:

«Լսի՛ր» — գանգաղօրէն և ախրամած անդրա-
գառնում էր բերդից-բերդ:

— Ես նրա համար եկայ, որ ձեր Մարիամը...

Ծերունի զինուորը ջոկում է կապիտանի նա-
մակն՝ ուղղած իւր աղջկանը:

— Նոյնպէս տասը տարեկան է... Եւ այժմ նա
քնած է տաք անկողնի մէջ... Կանթեղի լոյսի տակ...
Ես նրա համար փախեցի, կապիտան:

— Ի՞նչու:

— Մենք - սլաւոններս նախապաշարուած ենք:

— Ես քեզ չեմ հասկանում:

— Այնպէս լինի որ նահատակիրը, կամ Աստուած... չպատժէ ձեզ՝ նրա միջոցով... Եթէ դուք թոյլ առք այսպիսի մի անսպասելի դործ:

— Ի՞նչու համար ես դու այդ ասում:

— Որովհետեւ դուք կարող էք անել նոյնը, ինչ որ արել եմ ես:

— Օրինակ:

— Ստուգելն ես յանձնեցի Նագէյլին, դուք էլ պահապանը կյանձնէք ինձ... Ես եկայ ձեզ մօտ, դուք էլ կգնաք զօրավարի մօտ:

— Բայց դու նրան չգիտես: Աւելի շուտ դու այս քարից գութ կտեսնես:

Եւ նա իւր ավր խփեց պատին:

— Միւկնոյն է. դուք արէք, ինչ որ կարող էք...

Մենք սլաւոններս նախապաշարուած ենք: Եւ իմ գլխին, և ձեր գլխին, և զօրավարի գլխին Աստուած կայ: Իսկ երբ օրէնքը լուծ է, Աստուած հրաշքներ է անում... Եթէ նա կամենայ, այս պատն էլ լաց կլինի... Նրա մօտ՝ արքայութեան մէջ՝ շատ նահատակներ կան: Նրան դեռ հարկաւոր չէ այդ աղջիկը:

Կապիտանը կռացաւ պատուհանից դէպի դուրս:

Մութ էր և ասպեր:

Նրան թուաց, որ մէկը կայ այդ ասպերի էտեւում: Եւ այդ մէկն անտեսանելի՝ բաղխում էր նրա սիրտը:

— Ընդունիր պահակը:

— Լսում եմ:

— Որևէ մէկին ուղարկիր ինձ մօտ լսալսերով: Փողոցում մութն է:

— Լսում եմ:

Այդ անիծեալ իտալական քաղաքները իսկական լարիրինթներ են: Ամենն էլ խառնափնթոր են: Ցերեկն էլ նանսպարհ չես դանիլ: Եւ յետոյ՝ սասանան գիտէ այստեղացիներին: Նրանք գլշերն աւելի քաջ են, քան յերեկը. — մանաւանդ երբ մենք անկիւններում շուռ ենք դպիս և մեր թիկունքը դարձնում ենք դէպի նրանց: Վերոնցիները սքանչելի կերպով գործում են դանակներով: Այդ զարկը նրանք ունին — թիակների արանքում:

IV

Սև ճեղքեր... Մուսյուլթեան մէջ հին արձանների սպիտակ ստուերներ: Սկալիդերներ*) դամբարանների երկաթակուռ հրաշալի կրօժեպներ: Մուսյուտ բանար... Բարակ աշտարակներ... Մթութեան մէջ խարխափուող կամարներ՝ բնկած ուղիղ մութ ճեղքերի վրայ... Տեղ-տեղ կանթեղի կրակը՝ Մալոննայի արձանիկի առաջ: Մի շատրուան՝ վեհարանի մուսյուտ պատերին անվերջ պսամում է ազատ ու փառաւոր անցեալի մասին... Եւ երբեմն աւատիա-

Վերոնի միջնադարեան կառավարիչները — Scaliqeri.

կան պահակները ,,Ո՞վ է գալիսը“: Նկատելով սալային, նրանք ուղղւում են:

Չոր հայթիւններն սկսեցին տարօրինակ ձայներով տարածուիլ անմռունչ հրապարակի վրայ... Մի այլ տեղից լսւում էին ընդհատուող երգի ձայներ.

,,Բայցում են զերեզմանները,
Բարձրանում են նահատակները“...

Եւ նորից շարագուշակ անգործութիւն, որ վայելում էր քաղաքի զինուորական պահակը:

— Այստե՛ղ է:

— Այն, պատասխանում է առաջնորդող զինուորը:

Ահռելի գարպանների տակ, որ յիշում է հինաւուրց Վերոնի ոյժը, բարէ սալայատակի վրայ լսելի գարձան պահապանի ձայնը և կրկին «Ո՞վ է գալիս, արթուն և գէր»: Մի սանդուղք, որ ընկած էր գէպի վեր, ամբողջովին ծածկուած էր զէնքերով: Մարմարիոն աստիճանների վրայ, որ փորուած էին հռովմէական անառակ կայսրերի արձաններից և բերուած էին զեղասեսիլ Աթէնքից, մարդկութեան արշարոյսին ժպտող՝ չէլլապայի աստուածներն էին տեղաւորուած: Բարձրութեան վրայ՝ զինուորները:

— Չորալարը:

— Քնած է:

Կապիտանն սկսում է աստանուիլ, բայց յիշեց՝ ,,ձեր Մարիամն էլ տասը տարեկան է“ և դռնէ.

— Չարթեցնել:

— Չեմ համարձակուիլ:

— Ես ձեզ հրամայում եմ:

— Ներեցէք, կապիտան, ես հրահանգ եմ ստացել: Չեմ կարող ձեզ չլսել և չթողնել: Բայց ինքս չպիտի դարթեցնեմ:

Երկաթէ կարգապահութեան ժամանակն էր:

Սպայի սիրար բարախում էր:

Նա կանդ առաւ և յանկարծ ժպտաց իւր աստանու մների վրայ:

— Էյլաու՛ի տակ ես վերք եմ ստացել, թշնամու վրանների վրայ եմ յարձակուել:

Նա անցաւ մի գոնով:

V

Նին պալատի մի անազին գահին էր:

Ճրագի ազօա լոյսն էր առկայծում: Նազիւ նըշմարում էին պատկերների ոսկեցօծ շրջանակները: Պատկերներն այդ շրջանակներում երևում էին՝ ինչպէս սև քառակուսիներ: Ահռելի պատուհաններ՝ իւրաքանչիւրն ինչպէս մի գարսաս: Նրանց առաջ՝ մոայլութեան մէջ նշմարում էին սպիտակ արձաններ: Ասես այնտեղ շարտուել են առասպելական տեսիլներ և, սպիտակ սաւաններում փաթաթուած՝ հսկում են արքայական ամպիոփանու տակ ընկած՝ տոհմական անկողնին: Անկողնից լսւում է խոմփոյ: Կապիտանը զիպաւ գահին մէջ տեղն ընկած կօշիկներ:

ըին և թուրն աղմկով սահեց մարմարին յատակի երեսով:

— Ո՞վ է այստեղ, յանկարծ ընդհատուեց խռմփոցը:

— Կապիտան Օսվայլը:

— Ի՞նչ է հարկաւոր, ի՞նչ է պատահել:

— Դեռ ոչինչ, ձերդ գերազանցութիւն, բայց կարող է տեղի ունենալ մի մեծ անարդարութիւն, որ կարող է մեր զլուխները ծածկել յաւիտենական խայտառակութիւնով:

Անկողնից բարձրացաւ մի ծանր, սպիտակ զանգուած:

— Ի՞նչ է այդ, ես չեմ հասկանում ձեզ:

Սպան կրկնեց:

— Դուք հաճեա՞ծ էք:

— Ոչ, հակելու ժամանակ չեն խմում:

— Դուք չէիք կարող այդ ինձ վաղը հազորդել:

— Ոչ, վաղն ուշ է... Վաղը, զինուորները, որոնք ինձ պիտի փոխարինեն, կտանեն և գնդակահար կանեն տասր տարեկան Կարա Մօրելիին:

— Ի՞նչու, ի՞նչու համար:

— Երէկ զինուորական ատեանը գատապարտել է նրան՝ իւր չորս եղբայրների հետ՝ մահուան պատժի: Իսկ այդ եղբայրների մեծը քսան տարեկան է:

— Յեան՞ջ...

— Ձերդ գերազանցութիւն, կարող էք փոխել սոսկալի գատափնիւր:

— Է՛յ, ո՞վ կայ այդտեղ:

Ներս վազեց մի զինուոր:

— Ճրագները վառիր:

Ճրագների զեղին լեզուները բարձրացան, պատերը լուսավառուեցին, պատուհանների մօտ կանգնած տեսիլները դարձան մարմարիոններ... պատկերների մութն ու մռայլը չքացան:

— Առաջ եկէք:

— Դուք խելագարուե՞լ էք:

— Ամենեին ոչ:

— Ուղիղ... Դուք, աւստրիական սպայ, զիշերը դարթեցնում էք ձեր բարձր իշխանաւորին և առաջարկում էք նրան փոխել կայսերական-զինուորական ատեանի օրինական գատափնիւր:

Նա կտխեց, մերկ, հաստ ու մազոտ ոտները, որի ծայրերը զխաչելով սառած մարմարիոնին, խսկոյն յետ ծայեց և զրեց տակը:

— Ձեր ամուսինն իտալուհի չ՞, արդեօք:

— Ո՛չ, ձերդ գերազանցութիւն:

— Կապիտան Օսվայլը, դուք վերք էք ստացել էյլաու՛ի մօտ:

— Այո՛, նաև Արկօ՛ի և Դանուբի մօտ, Ձեմլինի տակ և Տեմեշվարում:

— Ռազմական սպայ... և չզիտէ ծառայութիւն... Ի նկատի առնելով ձեր ծառայութիւններն, ես չեմ ենթարկիլ ձեզ զինուորական ատեանի: Լսում էք... Բայց... այս բողբոջիս դուք կզնաք զնդապետ Րէյմերսի մօտ և ձեր թուրը կյանձնէք նրան... Ձեզ մի շարաթ բանասրկութիւն... Մնացէք բարով:

Կապիտանը շուռ եկաւ:

— «Եւ իմ գլխին և ձեր գլխին Աստուած կայ: Եւ եթէ Աստուած կամենայ, հրաշք կանէ»:

— Այդտեղ ի՞նչ էք մըթմըթում:

— Ենթադրայ Մեյանատլիչի խօսքերը:

— Հնա, այն քաջ՝ սլաւոնական խօսք: Նա ինձ պահեց իւր կրծքով Զեմլինի մօտ, Սլաւոնները հէնց դրա համար են պիտանի: Էյ, սուբհանդակ, նրազները հանգցրու: Վազն ինձ կղարթեցնէք՝ ոչ ութին, այլ իննին... Դեռ մի կէս ժամ էլ դուցէ չընեմ:

Սպրդնած յու սինը բարձրացաւ լեռների ետեւից:

Նրա խորհրդաւոր լոյսն արդէն սիւռուել էր ամեն կողմ և այդ լոյսի մէջ երևում էին սիլվապանձ ու սառած աշտարակներ ու պատեր, Սան-Ջինօ՛ի բարձր դանդաղուներ, էրբայի և Սինիօրիի բերդը, դրանցից յետոյ մօտ տասն ու բիշները... Կաթուղիկէներ, պալատներ և Ջուստի այդու սև ու սղաւոր կիպարիսներ: «Լսիր» հնչում էր հեռուից:

— Ի՞նչ կլինի, եթէ ես ինձ սպանեմ, մտածում էր կապիտանը. չի կարելի այսպիսի յիշողութիւններով ապրել:

Փամփիկի թուշն ատի մէջ... ոսկեշող դանդուրները... կտրակ արմուկեր... և տիկնիկը սեղմած կրծքին իւր ապառ ձեռով,

Իսկ վաղը՞:

Առաջնորդող զինուորը տեսաւ իւր համար մի տարօրինակ բան:

— Մի՞թէ կապիտան Օսիայլը կարողանձււմ է լայ լինել:

VI

Առաւօտը մըրկում էր: Թխպերն ասես կպել էին սարերին և չէին շարժւում: Կաթուղիկէները և աշտարակների դուխներն երևում էին մշուշում: Նախընթաց օրն անձրևային էր և Ադեժ գետը եռում ու փքում էր բերդի ծանր կարմրջի տակ: Կիպարիսներն այսօր աւելի մռայլօտ էին: Զանդակները զողանջում էին անդադար: Առաջինը հնչեց Սան-Ջինօն, նրան ձայնակցեց Սան-Մմբրոջիօն և այդպէս ամբողջ Վերոնայի վրայ տարածուեցին բրօնզէ լեզուների մըմունջները: Նեղ փողոցներում մութն էր և խոնաւ: Ժողովուրդը վազում է դէպի հռովմէական կրկէտր...

Ի՞նչ կայ այնտեղ:

— Նրանք հինգն են լինելու:

Ոչ-որ չէ հարցնում.— ո՞վքեր են:

Երէկ աւտարիացիները թմբուկների բուլթ ու շարաղուշակ աղմկով փողոցներում ու հրապարակներում կարգում էին զինուորական ասեանի դասավնութիւնը.— Վերոնցիներին օրինակ տալու և նրանց մէջ երկիւղ ներշնչելու՝ զինուորական ասեանը վճռեց՝ փախստական Զիօփանի Մօրեյլիի բնատնիքին՝ սկսած Պիետրօ Մօրեյլիից և վերջացրած Կլարա Մօրեյլիով, զնդակահար անել, նրա համար, որ նրանք ծածկում են իրանց հօր փախստաստեղին, ապա յարաբերութիւն

39800-67



ունին նրա հետ և ուտելիք են հասցնում նրան ու այս բոլորը խոստովանել են իրանք, — պետութեան այդ դաւանաները:

— Նրանց զնդակահար չեն անիլ. ասում էին կանայք և աստիկ սարսափահար՝ փետում էին իրանց մաղերը:

- Ձէ՞ որ նրանք երեխաներ են:
- Մեծը բասն տարեկան է:
- Դու չզիտես աւստրիացիներին:
- Ո՞ւմ են նրանք խղնացել:
- Դատարանում նրանց զօրափարն ասել է. —

«խոսրացիներին պիտի ջարդել երեւակայելով»:

- Այո՛, բայց տասը տարեկան մանուկը՞:
- Նրան անշուշտ կաղատեն:
- Անկարելի է, որ նրա վրայ բարձրանայ

հրացանի կոթը:

— Ձինուորը մեքենայ է, նա կրակում է, դէպի ուր նրան հրամայում են:

- Իսկ երկինքը՞:
- Երկինքը վազուց է լուծւում, նա մեզ մոռացել է:

- Անիծուած լինին զրանք—այդ կրօտները:
- Հանգարդ... ահա նրանք:

Եւ ամբօխը ցրւում էր, տեսնելով մեծ բեխերով և խոշոր հասակով սլաւոններին, որոնք հաւատով և նշմարութեամբ ծառայում էին շվարներին*)

*) Սլաւոններն այդպէս են անուանում աստրիացիներին:

կեսարին: Երբ զօրափարներն զոհ էին լինում քաջ սերբերից, այն ժամանակ նրանց անուանում էին «բարի խողեր»: Եւ բարի խողերն ուրախանում էին՝ իշխանական զովասանքը լսելով:

Այսօր «բարի խողերը» չարացած էին:

Նրանք իմացել են զինուորական ատենանի դատավճռի մասին: Եւ ամեն մէկը մտաբերեց Դանուբի կանաչ ափերը, ծղօտէ տանիքների տակ խաղաղ խորճիթները և այնպիսի քոյրիկներ, ինչպէս որ Կլարա Մօրելլին էր: Երէկ նրանց ասացին, որ մաղեարները մերժել են կալանատուներին զնդակահարելու: Չօրափարն ինքն ունդարացի է և, իբրև զահիճներ, նա նշանակեց կրօտներին:

— Սլաւոն խողերից չպիտի ամաչել:

Առաւօտեան՝ նրանց՝ իբրև մխիթարութիւն՝ հաղորդեցին, որ կեսարը հաւատում է միայն սլաւոնների անձնուիրութեան և այդ գործի կատարումը թողնում է նրանց:

Նրանք նրան կանչում էին... «Կեցցէ»:

— Եթէ ծառայել — պիտի լաւ ծառայել... «Կեցցէ»:

«Կեցցէ»:

— Ձուր չեն երդուել... «Կեցցէ»:

VII

Առաւօտեան լուրը տարածուեց ամբողջ քաղաքում:

— Մահապատիժը յետաձգուած է մինչև կէսօր:

— Երևի տատանում են:

— Սպարապետն այդ վճիռը կփոխէ:

Աւսարխայիներէ մասին Վերոնան դատում էր իւր ձեռով:

Բաղեցկին մինչևանգամ չէր տեսել դատավճիռը:

Ժամը 9-ն, ստես հրաշքով, ամբողջ քաղաքն իմացաւ մի ուրիշ նորութիւն:

— Զիօվաննի Մօրեյլին եկել է և ինքն իրան հրապարակ հանել:

Ծերունուն իւր լեռնային բնակավայրում հազորդէլ էին զաւակների վիճակի մասին: Դեռ լոյսը նոր բացուելիս, զգրգուած, վրդովուած ու կծկուած, նեղ ու խոնաւ փողոցներով ձին քշելով, նա վազեց դէպի գօրանոցը: Յողնածուծիւնից ձին սայթաքում էր և նա, խեղճն ոյժ սալով մտրակին, նեաւում էր առաջ: Նրա ալեգարդը զլուխը քրտինքից թրջուել էր, իսկ մազերը կտկել էին թաց նակատին: Նրա շքնառութիւնը գուրս էր թռչում իւր ձեռով չանդրուած կրծքի տակից: Ոչ-ոք այնպէս չէր շտապում դէպի որևէ ուրախ տեսութեան, ինչպէս նա վաղում էր դէպի մահուան սարսափը:

— Դէ, այժմ նրանց զնդակահար չեն անիլ:

— Հայրը նրանց փոխարէն... Փառք Աստուծոյ... Խեղճ Զիօվաննին այնտեղ կհանդիպեն հրեշտակները:

Եւ Վերոնան, որ սիրում էր Զիօվաննի Մօրեյլին՝ ինչպէս իրանց փոխարէն վրիժառուի և հոգե-

տորի, ուրախանում էր նրա մահապատժով: Զէ՞ որ այդ մահապատժով բացւում են բանախ դռները՝ նրա զաւակներէ համար:

Ծերունին վայր ընկաւ բերդի մօտ:

Պահապանը խփեց նրան հրացանի կոթով:

— Ի՞նչ ես, դու, կորիւր, խաւական շուն:

— Ես Զիօվաննի Մօրեյլին եմ, ինձ որոնում են... Ի՞մ զաւակները դատապարտուած են:

Զինուորը կանչեց եֆրեյսօրին:

Նա լսեց և կանչեց ենթասայլին:

Ենթասայլն պահակապետին:

Զիօվաննիի Մօրեյլին բարձրացրին, սպա շղթայեցին: Ծերունին դրանով ուրախացաւ: Շղթաների ձայների մէջ նա լսում էր.

— Զաւակները կապրեն, զաւակները կապրեն, զաւակները կապրեն:

Զօրափարին յայանեցին: Նա չկամեցաւ նրան տեսնել: Ծերունիին ձգեցին բանար: Պատուհանի երկաթէ վանդակամածի արանքով նա տեսաւ լեռան բարձունքների թխակերը, որոնց ծոցում ինքը դեռ երէկ թագ էր կացել և ազատ էր ինչպէս քամին: Նրան թուալցին ամպերի մէջ իւր ընկերները—արժիւները, որոնց սուր աղաղակները նա լսում էր վաղ առաւետեան: Վերոնցի ազդասէրին միայն մի միտք էր դրազեցնում.— թոյլ պիտի տան, արդեօք, իւր մահից առաջ տեսնուել զաւակների հետ և համբուրել իւր Կլարայի ոտկէ զանդուրները:

— Ե՞րբ պիտի լինի զինուորական ատեանը, հարցրեց նա բանաստեղծին:

— Կսպասես... Գերեզմանից դեռ ոչ-որ չէ ազատուել: Զպիտի վազել: Գերեզմանն էլ դեռ ժամանակ ունի սպասելու:

VIII

Ժամը ասանումէկին՝ թխպերն ասես ցնցուել են և հեռացել: Լոյսն սպիտակել էր և ասես լցուել կրակով: Փայլուն ու խոնաւ բարձունքները վերցրել էին մոխրագոյն ու սառած գլխարկները և այդպէս մօտիկ էին երևում: Էլի պիտի վաս եղանակ լինի: Եւ Զիօվաննին մտարեղեց թէ ինքն ինչպէս էր կրծկեւում քարանձաւի մէջ: Այնտեղ չէր կարելի խարոյկ վառել, մանաւանդ զիշեր ժամանակ: Կրօտաները կը նկատէին: Այստեղ՝ յամենայն դէպս, տար է: Նրա քունը դալիս էր: Չէ՞ որ նա երէկուանից էր նանապարհորդում: Յետոյ էլ որքան էր վազել: Նա աստիկ յողնել էր: Նա ուղեց պառկել, բայց յանկարծ, կարծես, նրա կողքին խփեցին:

— Այս ի՞նչ է:

Թմբուկները հարում են: Այս քարէ պատերի արանքում, վայտերի արնածարաւ զնդակներն էլի կաշին են թնդացնում: Նրանց նուօոցի արանքում, սուր ու կարուկ կռնչում էին լեռնայինների պղնձէ կղջիւրները: Լսում է օտարերի արտփուն:

Այդ ո՞ւր են գնում կրօտաները:

Նա բարձրացաւ դէպի պատուհանը, բռնեց վանդակամածից և կախուէց նրանից:

Մլաւոնների վաշան է: Սաղաւարդների տակին թանձր յօնքեր և երկայն բեխեր: Այ թէ ինչպէս փոխում են քայլերը: Մէկ-երկու: Մէկ-երկու: Աղօտ կերպով շողում էին նրանց ուսերին հրացանների կոթերը: Սև ու դեղին դրօշը՝ կեսարի արծուով՝ ծրփծրփում էր: Եւ էլի թմբուկ և կղջիւրներ: Եւ կրկին այդ՝ մէկ-երկու, մէկ-երկու, մէկ-երկու:

Զխաւօր սպաներ՝—բարակ, նոր ներմկող բեխերով: Դրանք սերբեր չէին... Դրանք զերմաններ էին... Եւ յանկարծ...

Նրան թւում է, արդեօք... Ահա—երկու շարք զինուորներ և նրանց մէջ աեղը... Նինդը... Ո՞ւր նրանց... Ոսկհներ զլուխը... Մեծերի ետեից չէ կարողանում հասնել... Սայթաբւում է... Նա փոքրիկ, թոյլ քայլերը հաղիւ կարողանում է սուաջ քշել... Տէր Աստուած...

Բանախ մէջ լսուէց զաղանային գոռոց:

Պահապանը նայեց դրան նեղրերից:

Կարանաւորը կախուել է պատուհանի երկաթէ վանդակամածից և ալէզարդ զլուխը զարնում է երկաթներին: Դրսումն էլ զարնում են երկաթէ զրնաւերը, իսկ փողերի հեծկտող ձայները խլայնում են ամեն բան:

Վանդակամածն, ասես, կամենում է մօխ հետ պոկուել այդ անիրաւ պատերից: Նա շուռ եկաւ երեսը նանկուսած և արնաթաթախ:

Պահապանը կանչեց ընկերներին:

Վազեցին... պահակապահ սպան էլ նրանց ետևից:

— Ի՞նչ երեխաները... Շուտով կանգնեցրէք...

Շուտով... Ձէ՞ որ ես երեւցել եմ... Ես այստեղ եմ...

Ի՞նչ պիտի մահով պատժել... Ի՞նչ...

— Է՛յ, արհամարհեց հասաստ ծայնով—խաղաղ
զերմանացին:

— Ես երեւցել եմ, որ փրկեմ, հասկան՞ում էք:

Կանգնեցրէք, շուտով կանգնեցրէք:

Նա նետուեց շփարի ոտքերը:

— Ո՞ւմ, նրանց... Նրանց դասը վճուել է զին-
ուորական ատենանր... Հաստատել է սպարապետը...
Չեղ փողը պիտի դառնէ:

Ծերունի Մօրելլիի շրթունքները ծածկուեցին
փրփուրով: Նա ստատիկ կատաղութեամբ վեր յատ-
կեց և սուր, իւղունդների նման մասներով բռնեց
սպայի կոկորդից: Սպայի երեսը լցուեց արիւնով,
կարմիր աչքերը դուրս պրծան, բերանը բացուեց և
ինչ որ կակաղեց կոկորդում:

Բայց «բարի սլաւոնական խողը» փրկեց սպային:

Հրացանի ծանր կոթը բարձրացաւ... Հսուեց
խուլ ու բոթ ձայն... Մօրելլին սառապուեց զեանին.

— Կապեցէք անդամին:

Եւ, մոռանալով, «բարի սլաւոնական խողին»
շնորհակալիբ յայանել, շփարը դուրս եկաւ, սրբեց
կոկորդը, և հազիւ ուշքի եկաւ:

IX

Կրկէսում խիտ ամբօս էր հաւաքուած:

Հռովմէական անուելի կրկէս էր, որի կամարնե-
րը անհետանում էին բարձրութեան մէջ: Խորանար-
դի մի ճեղքուածից երևում էր երկինքը և, երբ նրա
երեսով անցնում էին թխպերը, թւում էր թէ նրանք
լողում են կրկէսի պատերի արանքում: Կրկէսը բու-
սել էր հողի մէջ, ասես ջամաքած մի մեծ ջրամբար
լինի: Այժմ նա ամբողջովին եռում է ժողովրդով:

— Նրանք հինգն են լինելու. լսում էր ամե-
նուրեր:

Կրկէսը նես էին մտնում փողով: Շփարներն
ամեն բանից էլ օգուտ էին քաղում: Մուտքերը պըն-
տացրած էին տախտակներով: Նրանց բաց ճեղքերին
կպել էին հետաքրքրուողները: Բախտաւորներն, որոնք
կարող էին վճարել յիսուն բայօկ, ստանում էին
կարմիր, ասես արիւնով ներկուած, աւստրիական ար-
ծուանիշով սոմսեր և ներս էին մտնում միակ դար-
պասով, որի շեմքում կանգնած էր պահակախումբը:
Կրկէսի ներսը ծածկել էին աւազով: Մէջ աեղ կանգ-
նել էին հինգ սիւն, նոյնպէս կեսարի դոյնով՝ ներ-
կուած—սև ու դեղին գծերով, ինչպէս ներկում են
պահապանների կալսնները: Կրկէսի շուրջը կանդնած
են զինուորներ: Ներսում հանդարդ է: Այն մարդիկ,
որ ունին աւելորդ յիսուն բայօկ, այդտեղ իրանց
պահում էին քաղաքափարի: Դրանք—օրինականու-
թեան ներկայացուցիչներ են: Դրսից՝ ամբօսն՝ ինչ-

պէս ծովի ալիքներ՝ զարնուում է երկաթէ հռովմի քարէ ամբուլթիւններին: Եւ զարնուում է աղմկալից, անողոր ալիքներով: Ներսում բոլորի աչքերը յառած են մուտքին: Ահա մարդկանց նչերի արանքում լսուեց թմբկի աւանակային դռուցը և պղնձէ փողերի ունոցը: Մօտիկ, աւելի մօտիկ: Կրօսաների կանոնաւոր շարքերը երևում են կրկէսի ասպարիտում... Սև ու գեղին դրօշը՝ ոսկի արծուանշով՝ հանդիսաւոր կերպով ծփծփում է նրանցից վերև:

— Նայիր, հողիս, իւրաքանչիւր սեան եաւուամի փոս կայ, սեանում ես:

— Ի՞նչու համար է, հարցնում է երիտասարդ կինն ապշած ու պղծած աչքերով:

— Երբ որ նրանց գնդակահար անեն, մարմինները կծգեն այն փոսերը, հողով կծածկեն, և կրօսաները հանգիսաւոր նուազարաններով կանցնեն նրանց վրայով:

— Ախ, այդ ի՞նչպէս հետաքրքիր է:

Ինքնագոհ փանառականներն իրանց հարիւր բաշտօ կնեքով փայելում էին կատարեալ դուարնութիւն: Յիմար կինը պղծած աչքերով սղմուել էր ամուսնուն: Սա էլ իրան հերոս էր համարում, որ կոչուած էր պաշտպանելու այդ թոյլ արարածը:

Կրօսաները դուրս եկան և կանգնեցին քառակուսի:

Նրանք հինգն են...

Ուղիղ, որբան խոստացել են...

Հինգը...

— Եւ փոքրիկ աղջիկն՝ ոսկի գանգուրներով՝ ասես Յիսուսի մարմնու մօտ կանգնած հրեշտակը լինի:

— Այն, նա հինգերորդն է ու ասար տարեկան է: Զինուորները պատմում են, որ նա բանաւում՝ աիկնիկից բաժանուելուց՝ արտասուում էր:

Կլարան սայթաքում էր: Նա ամբողջովին արտասուլթոր էր: Նրան չէին շղթայել: Նրա բարակ ձեռների և ոտների համար օղակներ չգանուեցին: Արեղակը պայծառ և աիրօղ գէմբով անցնում էր երկնի մէջ աղից: Նա իւր ճանանչներով խաղում էր աղջկայ զլխի վրայ: Կլարան ձեռները ծայեց աղօթօղի ձեւով: Նա ինչ որ բան էր ասում: Մի նշանով թմբուկները լուեցին: Լուեցին և պղնձէ փողերը: Ամբօղջ կրկէսում լուում էր երեխայի լայտխառն ծայնը:

— Պապիկներ, չեմ անիլ... Աստուած վկայ, չեմ անիլ... Ես միշտ ինձ լաւ եմ պահել... Հայր Իննօչենցիոն ինձ խոստացել է արծաթէ խաչ՝ երկնագոյն ժապաւէնով... Պապիկներ... Ձեմ անիլ... Ես լաւ եմ ուսանում... Ներեցէք... Ես էլ լեռները չեմ գնալ՝ հայրիկի մօտ... Պապիկներ... Վա՛յ, էլ չեմ անիլ... Աւելի լաւ է ինձ ծեծեցէք... Եթէ մի բան արել եմ կուղղեմ... Ես երբէք շաքար չեմ դողացել... Վա՛յ, պապիկներ... Ձեմ անիլ... Ձեմ անիլ... Ձեմ անիլ... Ձեմ անիլ...

Աւազ եղբայրը, հաւաքելով իւր բոլոր ոյժը, պատուեց զինուորների շղթան, նետուեց գէպի փոք-

րիկ աղջիկը, խլեց նրան զինուորի ձեռից, բարձրացրեց ոսկեհեր զլուխը և սղմեց իւր կրծքին:

— Անիրաւներ... Մանկասպաններ... Բարբարոսներ. կանչում էր նա:

Ամբոխն ասես ցնցուէց: Ասես մի ալիք անցաւ նրան վրայով:

— Ձեռի վրայ... կանչեց սպան, կասկածանքով նայելով Վերոնիկներին:

Ձինուորները սուխներին խողանակի ձև սալով, գէպի նրանց դարձրին:

— Թ՛մբուկներ:

Պիտի խլացնել մանկական ծայնը:

Իսկ կաշին նորից դուայ... Փողերը ոռնացին:

Սիւների մօտ էին մատաղ ու անմաղ գէմքեր:

Մեծը բասն տարեկան էր: Նրան կապեցին իւր քոյրիկի հետ միասին: Աղջիկը երեսը սղմել էր եղբօր կրծքին: Նա լաց էր լինում և նրա ամբողջ մարմինը ցնցուում էր:

Սև ու գեղին զրօշն այգ արևի տակ երևում էր ինչպէս կրակի կտոր:

— Ի՞նչ կայ այդտեղ. հարցնում էր ամբօխը զրսից, որ սղմուէլ էր տախտակի արանքներին:

— Հիմա... հիմա... շշնջում են նրանք: Քահանաները մօտենում են, սուրբ ճաշակն են բերում: Բոլոր հնգի աչքերն էլ կապում են: Աղջիկը չէ թողնում: Նրան չեն խլում եղբօրից: Փոքրերից մէկն աչքերից առնում է թաշկինակը և, աւսարխայիների երեսին, ասես երկաթէ ձեռնոց նետելով, գոչում է:

«Evviva litalia! A basso i tirani!»*) Եւ՛ ինչպէս արձուիկ՝ նայում է կրօսաների աչքերին:

«Bravo, bravo bambino! Che bello!» գոչում է ամբօխը:

Ամեն ինչ լուէց:

Ծովն՝ ասես խաղաղուէց, անդորրացաւ:

Այնպէս անդորր է, որ շրջիկ մթերալանառնների ձայները լուում էին հեռաւոր փողոցներից: Մի ինչ որ երդ թռչունի նման վեր բարձրացաւ և, կարծես ընդհանուր լուռթիւնից փախելով, փայր ընկաւ: Մարդիկ անծայն են՝ ինչպէս աշտարակները: Միայն Ջուստիի կիսարիսների բարակ սաղարթներն էին շրջում:

— Բըրը ..

Հրացանի առաջին կրակէլը...

Ամբօխի մէջ ազազակներ ու հառաչներ... Կանայր մեծ սարսափի մէջ էին:

— Բըրը...

Երկրորդը...

— Կապանքներն արձակում են... Չգում են փոսերի մէջ... Աղջիկը ճօճուում է... Կրօստը մօտենում է նրան: Հրացանի կոթը բարձրացրել է:

— Ձէ, չէմ կարող տեսնել:

Եւ երեխան փայր է ընկնում տախտակի այն ճեղքից, որից նա բռնել էր:

*) Կեցցէ՛ Իտալիան, կորչեն բռնակալները:

Լուսձ գանգաղներն՝ տսես կրակելուն էին սպասում:

Բրոնզէ լեզուները զօղանջեցին Վերոնայի գլխին: Կրկէսից լսուեց ուրախ երաժշտութիւնը:

«Բարի սլաւոնական խողերը» երաժշտութեան եղանակին ներդաշնակ՝ իշխանաւորների աչքերին նայելով, հանգիսաւոր կերպով ընթանում էին հողի հետ հաւատարեցրած շիրիմների վրայով:

Նրանք հինգն էին:

Մեծը բաճն տարեկան էր, իսկ վոքըր՝ տասը:

Նրանք հինգն էին:

* * *

— Ո՞րտեղ են նրանց գերեզմանները, հարցրի ես՝ կրկէսը հսկող սահապանից:

— Այժմ չկան: Աւստրիացիները քանդել են ու գիակները ինչ որ տեղ են տարել: Ժողովրդի մէջ խօսւում է, իբր հինգ հուրի գիշերները գալիս-կանդնում են այդ տեղերի վրայ: Ամենից բարձրը Կլարա Մօրեյլիի ուրուականն է—մաքուր, ինչպէս արցունքը և սրայձառ... Ու նրա գլխի վրայ ոսկի ճանանչներ... Այստեղ էկան բահանաները և հողեհանդիսա կատարեցին... Այն ժամանակ տէրաէրներն էլ սպասութեան կողմնակից էին:

— Իսկ ի՞նչ եղաւ ձերունին:

— Նա խելագարուեց: Նրան դատի էլ չենթարկեցին: Նրան սպանեցին բանտի մէջ:

— Ի՞նչպէս:

— Հրացանի կոթով ջարդեցին զանգը:

— Նրանք հինգն էին... վերջացրեց նա իւր զրոյցը:

Այո «Նրանք հինգն էին» հնչւում էին իմ ականջին և արթուն և քնած ժամանակ: «Նրանք հինգն էին» զօղանջում էին Սան-Ջէնօ'ի զանգակները: «Նրանք հինգն էին», շրշում էին Ջուստի այգու սեռ ու ախուր կիսարիսները, ճօճելով իրանց սուր սաղարթները... «Նրանք հինգն էին» կարկաջում էին անբուն շաարուանները և Ադիփայի կարմիր ու ծանր կամարների տակ բորբոքուող ալիքները:


Նրանք հինգն էին:



ՀՀ Ազգային գրադարան



ML0303898



1
2

ՎԼ. ԳԻԼԵԱՐՈՎՍԿԻՑ, ՓԱԽՍՏԱԿԱՆ 5 Կ.
ՎԱՍ. ՆԵՄ. ԴԱՆՉԵՆԿՕ, ՆՐԱՆԲ ՀԻՆԳՆԷԻՆ . . 10 Կ.

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ.

Ձեռնարկելով «ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆԻ» հրատարակութեան և լոյս ընծայելով (մի ամսուայ ընթացքում) երկու համար, պատրաստել ենք նաև մի շարք զրոյցներ Տալտոյից, Տուրգենիևից, Գլէր Ուսպենսկուց, Կարալևիկայից, Ձեխովից, Անդրէևից և օրիշներից:

«ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆԻ» նպատակն է՝ ընթերցող հայ ժողովրդին մասամբ ծանօթացնել ուսս գրականութեան հետ և ընթերցանութեան նիւթ մատակարարել, — հետաքրքիր՝ ըովանդակութեան կողմից և մատչելի՝ գների նկատմամբ:

հրատարակելի նիւթերի խմբագրութիւնը յանձնուած է պ Արշակ Կայծունիին, որին և պիտի դիմէ «ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆԻ» վերաբերեալ օրև է առնչութիւն ունենալ կամեցողը:

Հասցէն՝ Москва, Большая Сухаревъ пер. Типография Бархударяниа Аршаву Կայծուն.

